

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՆՈՒ ՄԱՀՄՈՒԴ ԽԱՄԵՍԻԱՆ

ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՆԳՆԵՐԵՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(իրանական գիտակրթական համատեքստում)

Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական թ.գ.դ., պրոֆեսոր **Ս.Ք. Գասպարյան**
ղեկավար՝

Պաշտոնական թ.գ.դ., պրոֆեսոր **Ա.Ս. Հովհաննիսյան**
ընդդիմախոսներ՝

թ.գ.թ., դոցենտ **Ն.Հ. Գասպարյան**

Առաջատար Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան
կազմակերպություն՝

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հոկտեմբերի 11-ին ժամը 14³⁰-ին, Երևանի պետական համալսարանի 009 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2013թ. սեպտեմբերի 2-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
թ.գ.դ., պրոֆեսոր՝

Ե.Լ. Երզնկյան

Հայտնի է, որ լեզուն «ընդհանրապես» վերարտադրելու բոլոր փորձերը սովորողին (մասնավորապես ոչ լեզվակիր հանրության շրջանակներում) փակուղի են տանում: Այստեղից էլ հետևում է, որ լեզվի՝ որպես արդյունավետ հաղորդակցման համընդհանուր միջոցի կարևորությունը անհրաժեշտություն է ձևավորում տիրապետելու այս կամ այն մասնագիտական լեզվի տարրական մակարդակին՝ այսինքն լեզվի այն տարատեսակին, որի իմացությունը կապահովի հատուկ՝ մասնագիտական նպատակներով գիտական հաղորդակցություն:

Պատահական չէ, հետևաբար, որ գիտական, տնտեսական, քաղաքական ու մշակութային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց գլոբալացվող աշխարհը առաջ է քաշել միջազգային անսահմանափակ հաղորդակցում ապահովելու պահանջը: Եվ հենց այս համատեքստում է, որ առանձնակի կարևորություն է ձեռք բերել անգլերենը որպես միջազգային հաղորդակցման լեզու, որի արդյունավետ կիրառությունն այսօր ի գործ է առավել նպատակային դարձնել մարդկանց շփումները միջազգային մասշտաբով, հնարավորություն տալ մասնագետներին կատարելագործելու իրենց մասնագիտական հմտությունները պահանջվող այս կամ այն բնագավառում, որն էլ թույլ կտա նրանց տարբեր մասնագիտական թեմաներ քննարկել միջազգային գիտաժողովներում, միջազգային հրապարակումներում, իրականացնել փորձի փոխանակում «մասնագիտական լեզվական հանրության» հետ, հետևել իրենց բնագավառում աշխարհում առկա արժեքավոր ձեռքբերումներին:¹

Այս ամենն այսօր կարևոր նախադրյալ է դարձել մասնագիտական առավել մեծ հաջողությունների հասնելու համար և ընդգծված հետաքրքրություն հարուցել մասնագիտական այս կամ այն ոլորտում կիրառվող գիտական անգլերենի էական հատկանիշների քննության նկատմամբ: Այստեղից էլ բխում է անգլերենում ընդունված գործառական ոճերի տարբերակման և դրանց համակարգում գործող ճարտարագիտական անգլերենի ոճագործառական յուրահատկությունների քննության անհրաժեշտությունը: Այսպիսով, սույն ատենախոսության

¹ Gasparyan S. *ESP as an Object of Learner-Oriented Teaching* // Didaktik und Methodik des Fremdsprachenunterrichts. Heft IV, Bonn, July 1998.

թեմայի **արդիականությունը** նախ և առաջ պայմանավորված է վերը նշված հանգամանքներով: Ընտրված թեմայի մշակումն **արդիական** է նաև այն առումով, որ իրանական գիտական հաղորդակցման համատեքստում և հատկապես ճարտարագիտության բնագավառում անգլերենի տվյալ տարատեսակի տիրապետման մակարդակը ակնհայտորեն հեռու է բավարար լինելուց, քանի որ հստակ պատկերացում չկա տեխնիկական այս կարևոր ոլորտում կիրառվող անգլերենի ոճագործառական նկարագրի մասին: Ատենախոսության մեջ ձևակերպված հիմնադրույթների քննությունն ու պարզաբանումը կարող է կարևորել ՀՆԼ-ի այս տարատեսակի ուսուցման համապատասխան մեթոդների կիրառման հարցը, որն այսօր ընդհանրապես և Իրանի ակադեմիական միջավայրում մասնավորապես առաջնահերթ խնդիրների շարքում է:²

Ուսումնասիրության **նպատակն** է համակողմանիորեն քննել ճարտարագիտական անգլերենի լեզվական ու ոճական այն բոլոր յուրահատկությունները, որոնց առկայությունը թույլ է տալիս ճշտել դրա զբաղեցրած տեղը գիտական գործառական ոճի տարաբնույթ դրսևորումների շարքում և բնութագրել այն որպես գիտատեխնիկական ենթաոճի միանգամայն ինքնատիպ արտահայտություն: Լայն առումով՝ սույն ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում ճարտարագիտության ոլորտի մասնագետներին հասանելի դարձնել ճարտարագիտական անգլերենի լեզվական ու ոճական այն հատկանշական գծերը, որոնց իմացությունը կօգնի նրանց ոչ միայն կարդալու և հասկանալու մասնագիտական գրականություն, այլև անգլերեն շարադրելու իրենց իսկ հետազոտության արդյունքները՝ հնարավոր լիարժեքությամբ փոխանցելով իրենց հեղինակային մտադրությունները: Գարտարագիտական անգլերենին տիրապետելը ճարտարագետ-մասնագետներին հնարավորություն կտա

² Բանն այն է, որ Իրանի համալսարաններում գիտական, մասնագիտական կամ գործարար կարիերա հետապնդող ուսանողներին մատուցվող ընդհանուր անգլերենի դասընթացները նրանց չեն ապահովում ոչ անհրաժեշտ գիտելիքներով լեզվի՝ այս կամ այն մասնագիտական ուղղվածությունն ունեցող տարատեսակի յուրահատկությունների մասին, ոչ էլ, առավել ևս, հաղորդակցական հմտություններով:

ձեռք բերելու որոշակի հմտություններ և առավել հստակ ու արդյունավետ հաղորդակցվելու արտերկրի իրենց գործընկերների հետ:

Վերը շարադրված նպատակին հասնելու համար ուսումնասիրության ընթացքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- քննության առնել անգլերեն ճարտարագիտական տեքստերում բառապաշարի գիտական բառաշերտը ներկայացնող միավորների իմաստային կառուցվածքը և դրանում հիմնանշանակային ու առնչանակային իմաստների հարաբերակցությունը, քննել նաև ոճական ու համատեքստային իմաստների փոխազդեցության խնդիրները,
- ուսումնասիրել քերականական ձևերի ու կարգերի, ինչպես օրինակ, գոյականի թվի, բայի ժամանակային ձևերի գործածությունները ոճական ներունակության տեսանկյունից,
- որոշարկել շարահյուսական կապերի իրացման բնույթը (անշաղկապություն, բազմաշաղկապություն և այլն) և խոսքի բանադարձումների (բառական հակադրություն, խաչակերպ և այլն) կիրառության հնարավորությունը ճարտարագիտական տեքստերում:
- քննության առնել նաև պարբերության սահմանները այս բնագավառի տեքստերում:

Նշված խնդիրները լուծելու համար կիրառվել է լեզվաոճական վերլուծության մեթոդը, որը ներառում է վերլուծություն իմաստային և վերնշանային մակարդակներում:³ Իմաստային մակարդակում քննության են առնվում լեզվական միավորների ընդհանուր լեզվական բովանդակությունը, կամ այլ կերպ՝ ուղղակի, անվանողական, բառարանային իմաստները: Սա լեզվական հետազոտության մախնական քայլն է, որին հաջորդում է վերնշանային կամ բուն ոճական վերլուծությունը: Լեզվաոճական վերլուծության մեթոդը համընդհանուր կիրառություն ունեցող այնպիսի մեթոդ է, որը կարող է կիրառվել

³ Steu Ахманова О.С. Словарь лингвистических терминов. М., Советская Энциклопедия, 1969, с. 488; Linguostylistics: Theory and Method. / Ed. By O. Akhmanova. M., MGU, 1972:

ցանկացած տիպի(այդ թվում՝ գիտական) տեքստերի քննության մեջ՝ անկախ դրանց գործառական պատկանելությունից: Այսպիսով, ուսումնասիրության հիմնախնդիրն է քննության առնել անգլերեն ճարտարագիտական տեքստերում պարունակվող գիտատեխնիկական տեղեկատվության հստակ դրսևորման սահմանները և որոշարկել դրանցում վերնշանային միավորների (մաս տեքստահատվածների) առկայության հնարավորությունը, քանզի հայտնի է, որոշ գեղարվեստական տեղեկատվական ուղղվածության տեքստերը, լայն իմաստով, գերծ չեն հուզարտահայտչական երանգավորում ունեցող միավորների գործածության հնարավորությունից:⁴

Եվ այսպես, ուսումնասիրության **մեթոդաբանության** հիմքում լեզվաոճական վերլուծության մեթոդի կիրառությունն է, որը բուն ոճական քննությունից բացի, թույլ է տալիս լեզվական նյութը հետազոտության ենթարկել լեզվի ամենատարբեր հայեցակերպերում՝ բառային, ձևաբանական, շարահյուսական և այլն:

Ինչ վերաբերում է ատենախոսության **նորույթին**, ապա այն նախ և առաջ պայմանավորված է ակադեմիական միջավայրում կիրառվող ճարտարագիտական անգլերենի (ՀՆԼ⁵) լեզվական ու ոճական հատկանշական գծերի վերհանման, դրա ոճագործառական բնույթը որոշարկելու և այն որպես գիտատեխնիկական ենթաոճի ուրույն գործառական դրսևորում սահմանելու փորձով: Ըստ էության առաջին անգամ փորձ է արվում համակողմանիորեն քննության առնել անգլերենի այս տարատեսակը՝ շեշտադրելով դրա գործառական բնույթը և ընդգծելով այն գիտնականների մոտեցման կարևորությունը, համաձայն որոնց մասնագիտական որևէ ոլորտում կիրառվող անգլերենի ցանկացած

⁴ Стю Чаковская М.С. Тексткаксообщение и воздействие. М., 1986; Взаимодействие стилейнаучной и художественной литературы. М., Высшая школа, 1990; Гаспарян С.К. Фигура сравнения в функциональном освещении. Ереван, ЕГУ, 2000:

⁵ ՀՆԼ տերմինը առաջին անգամ գործածվել է Օ. Պողոսյանի «Գրականագիտական շարադրանքի գործառական-հաղորդակցական հայեցակերպը (անգլերեն փաստական նյութի հիման վրա) (Երևան, ԵՊՀ, 2009) թեկնածուական ատենախոսության մեջ որպես անգլերենում լայն կիրառություն ունեցող LSP (ESP, EAP) տերմինաբանական հապավման հայերեն տարբերակ:

տարատեսակ այս կամ այն գործառական ուղղվածությունն ունի և դրա տեղը գործառական ոճերի համակարգում է.⁶

Կատարված ուսումնասիրության **տեսական նշանակությունը** նախ և առաջ պայմանավորված է ճարտարագիտական տեքստերի քննության ոլորտում լեզվաոճական վերլուծության մեթոդի կիրառմամբ, որը հնարավորություն է տալիս վեր հանելու լեզվական ու ոճական այն բոլոր յուրահատկությունները, որոնց համապատասխան ընկալմամբ ու արժևորմամբ էլ հնարավոր է դառնում պատկերացնել ճարտարագիտության բնագավառում կիրառվող անգլերեն խոսքիտեղը տեղեկատվական (մասնավորապես գիտական) ոճի տարաբնույթ իրացումների շարքում: Ստացված արդյունքներն, անշուշտ իրենց նպաստ են բերում անգլերենի գործառական ոճերի տեսության հետագա զարգացման գործին:

Ատենախոսության **գործնական արժեքը** դժվար է գերազնահատել հասարակական, տնտեսական ու գիտական միջազգային կապերի այսօրյա անմախաղեպ զարգացման ու ընդլայնման ժամանակակից պայմաններում և հատկապես իրանական ակադեմիական միջավայրում ուսումնասիրության արդյունքների արդյունավետ կիրառության առումով: Ստացված արդյունքները կարող են ներդրվել նաև ճարտարագիտության մեջ մասնագիտացող ուսանողներին մատուցվող դասընթացներում և ճարտարագիտական տեքստերի թարգմանության ոլորտում: Դրանք, անշուշտ, կօգնեն անգլերենի ոչ լեզվակիրների այն բոլոր խմբերին, որոնք անհրաժեշտություն ունեն հմտանալու և հաղթահարելու

⁶ Բանն այն է, որ արևմուտքում, ինչպես նաև Իրանի ակադեմիական համատեքստում ակնհայտ է ՀՆԼ-ները լեզվի ուսուցման մեթոդաբանություն համարելու հակումը (տես, օրինակ, Robinson P.C. ESP (English for Specific Purposes). Oxford, 1980; Hutchinson T., Warers A. English for Specific Purposes: A Learning-Centered Approach. Cambridge, 1987 և այլն): Սակայն, ինչպես համոզիչ կերպով ցույց է տրվել բազմաթիվ ուսումնասիրություններում, շեշտը պետք է դրվի ուսուցման օբյեկտի վրա, այլ ոչ թե մեթոդի, քանզի ոչ մի մեթոդ չի կարող օգնել, եթե հստակ չես պատկերացնում, թե ինչ էս ուզում սովորել (տես, օրինակ, Hoffman L. *Seven Roads to LSP* // Special Language.Fachsprache, 1984, vol.6, H.1-2; Close R.A. *The Advantages of Choosing RP for Teaching Purposes* // English Language Teaching, 1971, vol.25, N 2; Akhmanova O., Idzelis R. *What Is the English We Use?* Moscow, MGU, 1978 և այլն):

գիտատեխնիկական խոսքի ձևակերպման հարցում ունեցած դժվարությունները:⁷

Ուսումնասիրության **փաստական նյութը** ներառում է ժամանակակից իրանական և միջազգային գիտական ամսագրերում հրատարակված ճարտարագիտության ոլորտի գիտատեխնիկական հոդվածներ՝ այդ թվում քաղաքաշինական, մեխանիկական և էլեկտրոնային ճարտագիտության բնագավառներից (շուրջ 1000 էջ), ընդ որում նյութի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված բնագավառներում կիրառվող անգլերենի ոճագործառական յուրահատկությունները մինչև այժմ բավարար հետազոտական ուշադրության չեն արժանացել: Ընտրության հարցում կողմնորոշիչ է եղել նաև իրանական ակադեմիական միջավայրում առկա պահանջարկը:

Ատենախոսության հիմնադրությունները **փորձաքննություն** են անցել տարբեր գիտական հանդեսներում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ամբիոնի միատերում և տեսական սեմինարներում անցկացված քննարկումներում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնք ըստ անհրաժեշտության բաժանվում են ենթագլուխների, ուսումնասիրության հիմնախնդիրները լրացուցիչ մեկնաբանություններով լուսաբանող ծանոթագրություններից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից, որոնք առավել ամբողջական պատկերացում են տալիս ատենախոսության մեջ հատվածայնորեն քննարկվող փաստական նյութի մասին:

Ատենախոսության **առաջին գլխում («ՀՆԼ-ի ուսումնասիրության տեսապատմական հիմքերը»)**, որն ընդգրկում է չորս ենթագլուխ, նախ ներկայացվում է անգլերենի դերը միջազգային արդյունավետ

⁷ Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, նույնիսկ շատ բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողները տեխնիկական տեքստի գիտական շարադրանքը կազմելիս լուրջ դժվարությունների են հանդիպում: Այս մասին տես Dudley-Evans J., St John M. *Developments in ESP: A Multi-Disciplinary Approach*. Cambridge: Cambridge University Press, 1998; Swales J.M. *Ocluded Genres in the Academy: The Case of the Submission Letter* // *Academic Writing: Intercultural and Textual Issues*. / Ed. by Ventola E., Mauranen A. Philadelphia: John Benjamins, 1996.

հղորդակցման ոլորտում, կարևորվում է դրա աննախընթաց աճը հատկապես վերջին տասնամյակների ընթացքում, երբ աշխարհի տարբեր երկրների միջև հասարակական-քաղաքական, տնտեսական և այլ բնույթի շփումներն աստիճանաբար ավելի ու ավելի մեծ ծավալներ են ձեռք բերում: Այնուհետև համառոտ անդրադարձ է արվում ՀՆԼ-ների (ESP) ձևավորման պատմական նախադրյալներին և ապա՝ ներկայացվում այս ոլորտում առկա տեսական մոտեցումների հանգամանալից քննությունը:

Հայտնի է, որ դեռևս XX դարի սկզբին գիտնականներին սկսել է լուրջ մտահոգություն պատճառել այն իրողությունը, որ օտարերկրացու համար երբեմն անհաղթահարելի է օտար լեզուներ սովորելը, քանի որ օտար խոսքում լեզվակրի կողմից հաճախ գործածվող հուզական-արտահայտչական երանգավորում ունեցող շատ միավորներ ուղղակիորեն կապված են ազգային լեզվամտածողության և ազգամշակութային այնպիսի նրբերանգների հետ, որոնք օտարերկրացին դժվարությամբ է ընկալում ու սերտում: Եվ քանի որ աշխարհի մարդիկ շատ կարիք ունեն լայն շփումների և գիտական հաղորդակցումն էլ այդ շրջանակում չի կարող բացառություն կազմել, ուստի կարելի է հասկանալ գիտնականների այն մտահոգությունը, որ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի լեզու, որը կարողանա բավարարել աշխարհի գիտական հանրության արդյունավետ հաղորդակցման պահանջները, իր հնարավոր չեզոքությամբ ու հստակությամբ առավել ընկալելի լինի գիտական հանրությանը, բոլոր գիտնականների համար հասկանալի համընդհանուր «ծածկագիր» դառնա:⁸ Այս կապակցությամբ արհեստական լեզուներ ստեղծելու բոլոր փորձերն ընդհանուր առմամբ որևէ գոհացուցիչ արդյունքի չհանգեցրին, և դրա պատճառն այն էր, որ ցանկացած արհեստական լեզու փակ նշանային

⁸ Առաջին մտահոգություններն արտահայտել է Օտտո Յեսպերսենը, որի համոզմամբ՝ բնական մարդկային լեզվով ներկայացված բնագիր տեքստերը կարող են և պետք է մոդելավորվեն օտար լեզուների ուսուցման առաջին փուլերում, եթե սովորողն արդեն տիրապետում է լեզվական որոշակի ընդհանուր մակարդակի և նպատակամղված է հաղթահարելու գիտական հաղորդակցման պահանջները (տես ըստ՝ Ogden C.K. Basic English Applied, 1928):

համակարգ է և լայն առումով՝ անգործ՝ բավարարելու մարդկային հաղորդակցության օրըստօրե աճող պահանջները:⁹

Գլխունականները եկան այն համոզման, որ մարդկային հաղորդակցությունը խթանող միջազգային լեզուն, որը գերծ կլինի արհեստական լեզուներին բնորոշ սահմանափակումներից, պետք է մշակվի մարդկային բնական լեզվի հիմքի վրա: Հասարակական, քաղաքական, տնտեսական ու հաղորդակցական պահանջների հետագա զարգացումներն աստիճանաբար հանգեցրին անգլերենի՝ որպես միջազգային գլխական հաղորդակցման լեզվի ընտրությանը:

Հետաքրքրական է, որ XX դարի 60-ականներից սկսած ՀՆԼ-ների ձևավորումն ու աստիճանաբար շրջանառության մեջ մտնելը կապվեց ուսուցման մեթոդաբանության հետ և տիրապետող դարձավ այն մոտեցումը, որ ՀՆԼ-ների տեսությունը պետք է զբաղվի սովորողների կրթական նպատակների իրականացմանը նպաստող մեթոդների ու սկզբունքների մշակմամբ: Այս մասին են վկայում ՀՆԼ-ների քննության ոլորտում առկա բազմաթիվ տեսություններ,¹⁰ որոնք մանրամասնորեն ներկայացվում են աստենախոսության առաջին գլխում: Այս ոլորտում շարունակվող հետագա ուսումնասիրությունները, սակայն, գլխունականներից շատերին բերեցին այն համոզման, որ ՀՆԼ-ների խնդիրը հարկ է քննարկել գործառական ոճագիտության շրջանակներում, քանի որ ուսուցման խնդիրներ բարձրացնելուց առաջ անհրաժեշտ է հստակ պատկերացում

⁹ Դրա վառ օրինակներից է Esperanto-ի ստեղծումը, որը թեև 60-70-ականների ընթացքում որոշակի ոգևորություն առաջացրեց սովորողների շրջանում, սակայն շատ շուտով դուրս մղվեց շրջանառությունից, երբ ապացուցվեց նշանային այդ արհեստական համակարգի անհուսալիությունը մարդկանց միջև լիարժեք հաղորդակցություն ապահովելու առումով:

¹⁰ Տես օրինակ Widdowson H. G. *Defining Issues in English Language Teaching*. UK: Oxford University Press, 2003; Hutchinson T., Waters A. *English for Specific Purposes: A Learning Centered Approach*. CUP, UK, 1987; Dudley-Evans J., St John M. *Developments in ESP: A Multi-Disciplinary Approach*. Cambridge: Cambridge University Press, 1998 և այլք:

ունենալ ուսուցանվող առարկայի բուն էության մասին:¹¹ Այս ուղղությանը հարող տեսությունների քննական վերլուծությունը բերում է մեզ այն համոզման, որ հատուկ, մասնագիտական ուղղվածություն ունեցող լեզուն (ՀՆԼ)՝ տվյալ դեպքում անգլերենը, հարկ է դիտարկել որպես անգլերեն գիտական արձակի ինքնատիպ գործառական դրսևորում, որը ձևավորվել ու կիրառության մեջ է մտել գիտական հաղորդակցման պահանջները բավարարելու, դրա սահմաններն առավել ընդլայնելու և այն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Ակադեմիական միջավայրում կիրառվող անգլերենի տարատեսակները շատ են ու բազմազան: Ու թեև, ձևավորվելով բնական մարդկային լեզվի (տվյալ դեպքում անգլերենի) գիտական գործառական դրսևորումների հիմքի վրա, դրանք բնութագրվում են բազմաթիվ ընդհանրական լեզվական երևույթների առկայությամբ, կիրառություն գտնելով մասնագիտական հաղորդակցման ամենատարբեր բնագավառներում՝ դրանք ուղղակիորեն պայմանավորված են խոսքային տվյալ տարատեսակի գործառության նպատակներով և կախված թեմատիկ սահմանափակությունից դրսևորում են նաև այս կամ այն կոնկրետ մասնագիտության համար հատկանշական գծեր, որոնք ի հայտ են գալիս լեզվական որոշակի միավորներիգործածությամբ:

Ատենախոսության **երկրորդ գլխում («Ճարտարագիտական անգլերենը որպես լեզվաոճական քննության առարկա»)**, որն ընդգրկում է հինգ ենթագլուխ, փուլ առ փուլ ուսումնասիրվում են ճարտարագիտության

¹¹ Այս կապակցությամբսրբստե Hoffman L.*Seven Roads to LSP*// Special Language. Fachsprache, 1984, vol.6, H.1-2; Close R.A.*The Advantages of Choosing RP for Teaching Purposes*// English Language Teaching, 1971, vol.25, N 2; Hyland K. "Specificity Revisited: How Far should We Go?"// English for Specific Purposes, 21 (4) 2002, Carver D.*Some Propositions about ESP*// The ESP Journal, 2, 131-137, 1983, HallidayM. A. K. An Introduction to Functional Grammar.London: Arnold, 1985; Akhmanova O., Idzelis R.What is the English We Use. Moscow: Moscow University Press, 1978; Gasparyan S. *ESP as an Object of Learner-Oriented Teaching*// Didaktik und Methodik des Fremdsprachenunterrichts. Heft I, Bonn, July, 1998; Պողոսյան Օ. Գրականագիտական շարադրանքի գործառական-հաղորդակցական հայեցակերպը (անգլերենի փաստական նյութի հիման վրա): Թեկնած.ատեն. սեղմագիր, Եր., ԵՊՀ, 2009 և այլն:

երեք տարբեր ոլորտներում (քաղաքաշինություն, մեխանիկա, էլեկտրոնիկա) անգլերենի կիրառության յուրահատկությունները՝ ընդ որում հանգամանորեն անդրադարձ է արվում ճարտարագիտական տեքստերի ինչպես կառուցվածքային, այնպես էլ լեզվական բնորոշ գծերին: Լեզվաոճական վերլուծության պահանջներով պայմանավորված՝ ուսումնասիրության իմաստային մակարդակում հանգամանալից քննության են ենթարկվում տեքստերում առկա բառապաշարի շերտերն ու դրանց հնարավոր փոխներթափանցումները, վեր են հանվում բնորոշ տերմիններն ու տերմինակերպ միավորները, ըստ անհրաժեշտության անդրադարձ կատարվում դրանց ծագումնաբանության խնդիրներին, քննարկվում են ընդհանուր գիտական տեղեկատվությունը փոխանցող բառակապակցական միավորները, որոշարկվում են դրանց հասկացական ոլորտները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, օրինակ, որ ընդհանուր գիտական բառապաշարի միավորները (*frame* – a rigid structure surrounding a picture, door, etc., *principle* – a general scientific theorem or natural law, stable – firmly established և այլն) ճարտարագիտական տեքստերում ոլորտին բնորոշ թեմայի ճնշման տակ հայտնվելով իմաստային որոշակի փոխակերպման են ենթարկվում, տեղի է ունենում բառիմաստի նեղացում և կոնկրետացում, որն էլ օգնում է գիտական տեղեկատվության հստակ փոխանցմանը: Այսպես՝

beam - a ray or shaft of light (in building construction - a horizontal member spanning an opening and carrying a load),

concrete - a mass formed by concretion or coalescence of separate particles of matter in one body (artificial stone made of a mixture of cement, aggregate (hard material), and water.)

Բառապաշարի քննությունը խոսքիմասային պատկանելիության դիրքերից բացահայտում է անվանական, և հատկապես գոյականական միավորների գերակայությունը ճարտարագիտական տեքստերում, որն էլ, ըստ երևույթին բացատրելի է այն հանգամանքով, որ այսպիսի տեքստերում տեխնիկական այս կամ այն սարքի տեխնիկական նկարագրի մանրամասների ներկայացումն անխուսափելի է:

Այսպես՝

*The proposed **method** is to stick **carbon FRP sheets** of specific **lengths** to the **sides** of the **beams** of a reinforced **concrete joint** (i.e. web-bonded FRP) and extend them over the **joint** to act as an **anchor**.*

Զգալի թիվ են կազմում նաև որոշչային բառակապակցությունները (significant energy, inelastic region, experimental investigation, plastic hinging, natural sand, increasing needs, infrastructural development, quarry waste, partial substitute, full substitute, brittle failure, loading regime, flexural cracks, column face, concrete crushing, beam rotation, joint region, ductile failure, environmental load, control specimen, adequate ductility և այլն) և բաղադրյալ գոյականները (ordinary moment resisting frame, joint core region, brittle failure mechanism, horizontal displacement hysteretic curves, the energy absorbing capacity, the final failure conditions, carbon fibre reinforced polymer sheets և այլն), և սա միանգամայն համահունչ է գիտական արձակին ներկայացվող ոճական պահանջներին, քանի որ այսօրինակ միավորներն օգնում են բավականին խիտ ու հակիրճ ներկայացնելու գիտական տեղեկատվությունը:

Հարկ է նշել, որ գործառական առումով անվանական միավորներին են մոտենում նաև նվազագույն շարակարգային շարքերը, ինչպես օրինակ in order to make sure that...., in this context is defined as...., the method can be used just as effectively for.... և այլն, որոնք թեև ավելի ծավալուն են, քան բառերը և ստորոգում են պարունակում, այդուհանդերձ դրանք բարձր վերարտադրողականությամբ օժտված այնպիսի միավորներ են, որոնք գործառական տեսանկյունից մնան են անուն խոսքի մասերին:

Ինչ վերաբերում է բուն ձևաբանական քննությանը, ապա այստեղ դրսևորվում են գիտական արձակի ոճին բնորոշ այնպիսի գծեր, ինչպիսիք են կրավորական սեռի գերակշռող գործածությունը, որը լավագույնս ծառայում է գիտական ընդհանուր դրույթներ ներկայացնելու նպատակին, վաղակատար ժամանակաձևերի (հատկապես ներկա վաղակատարի) լայն կիրառությունը, որն իր իրադրային պայմանավորվածության շնորհիվ ի գործ է ուղղակի կապ ստեղծելու գիտական հողվածի հեղինակի և նրա ընթերցողի միջև: Ճարտարագիտական տեքստերում առանձնակի հետաքրքրություն են

ներկայացնում եղանակավորող բայերը (մասնավորապես՝ can, may, would), որոնց կիրառությամբ հեղինակին հաջողվում է կապ ստեղծել իր ոլորտի նախորդ հետազոտությունների և իր հետազոտական արդյունքների միջև և ապա, գործածելով այնպիսի բայական միավորներ, ինչպիսիք են define, show, study, test, որոշակի զգուշավորությամբ առաջ քաշել իր ձեռքբերումները գլխավորապես որպես աշխատանքային վարկած: Այլ կերպ՝ եղանակավորող բայերը որպես հեջավորման (խոսքի կապակցման) միջոցներ հնարավորություն են տալիս հետազոտողին առավել զգուշավորությամբ գիտական հանրությանը ներկայացնելու իր կողմից առաջադրվող դրույթներն ու մոտեցումները՝ զերծ պահելով նրան ավելորդ անհամեստությունից: Ակնհայտ է նաև of-սեռական կառույցների գերակայությունը՝ s-սեռական ձևերի նկատմամբ, ինչպես, օրինակ elastic level **of** resistance, range **of** response, the principle **of**, the effectiveness **of** և այլն: Այս առանձնահատկությունն ավելի է ընդգծում ոճի տեղեկատվական բնույթը և հետազոտությունը կատարող անձի որոշակիության բացակայությունը:

Հետաքրքրական է, որ թեև գիտական ոճի ընդհանուր պահաջներից բխում է գիտական շարադրանքում անձի անորոշություն արտահայտելու միտումը, որն էլ, սովորաբար, գլխավորապես ապահովվում է we անձնական դերանվան և կրավորական կառույցների լայն կիրառությամբ, այդուհանդերձ ճարտարագիտական ոլորտի հետազոտություններում գրեթե լիովին բացառված է այս դերանվան գործածությունը, որն էլ, ըստ երևույթին, հարկ է բացատրել առավել ընդհանրացված, վերացական ու ֆորմալ շարադրանքի պահանջով:

Շարահյուսական տեսանկյունից ճարտարագիտական տեքստերը աչքի են ընկնում բարդ նախադասությունների (ինչպես բարդ համադասական, այնպես էլ բարդ ստորադասական) գործածությամբ:

Այսպես՝

*It is found that, the isotropic ceramic plate has the lowest deflection for all the boundary conditions considered here, **and** the isotropic metallic has the largest deflection.*

However, the reduction in compressive strength of

*CQW concrete was overcome **when** mineral admixtures such as silica fume and fly ash were used.*

*In addition, the strain in the supply of natural sand will be reduced, **and** the cost of concrete production will be offset **if** the quarry waste is used as a partial replacement of natural sand.*

Այսօրինակ նախադասությունների կիրառությունը՝ մասնավորապես որոշակի շաղկապների գործածությամբ հնարավորություն է տալիս հեղինակին առավել հստակ ու ճշգրիտի ցույց դնել արտահայտված գաղափարների միջև առկա հարաբերությունները, որով և այս ոճի տեքստերը էապես տարբերվում են անշաղկապ կապերով հագեցած խոսակցական ոճից:

Ճարտարագիտական տեքստերի ուսումնասիրությունը շարահյուսական մակարդակում բացահայտում է նաև բացարձակ կառույցների նկատելի գործածություն, որը նույնպես զգալի չափով պայմանավորված է գիտական տեքստի հակիրճ ու հստակ շարադրանքի պահանջով:

Այսպես՝

*This necessitates stirrups **extending between these two regions**, perhaps supplemented by specially bent top beam bars, to carry the entire shear force.*

Հետազոտվող տեքստերում ըստ նախադասությունների կատարած բուն գործառույթի կարելի է տարբերակել հետևյալ տիպերը. **կանխադրող**, որը հիմնված է հայտնի փաստերի վրա և ապացույցներ չի պահանջում, **փաստարկող**, որը ներկայացնում է հետազոտողի սեփական գաղափարներն ու փաստարկները և **սահմանող**, որն ըստ էության ի մի բերելով հետազոտողի ամենակարևոր գաղափարները՝ ամփոփ սահմանում է նրա հիմնական ձեռքբերումը:

Այսպես՝

1. In designing an ordinary moment resisting frame, often the principle of strong-column-weak beam is

implemented in order to make sure that plastic hinging occurs in the beams and as such the frame is capable of dissipating significant energy while remaining stable in the inelastic region. (In designing an ordinary moment resisting frame, often the principle of strong-column-weak beam is implemented in order to make sure that plastic hinging occurs in the beams and as such the frame is capable of dissipating significant energy while remaining stable in the inelastic region. (կանխատրող)

2.The problem is that this closeness may allow cracks caused by plastic hinging to propagate into the joint core region and as such initiate a brittle failure mechanism. (փաստարկող)

3.The method can be used just as effectively for the repair of earthquake damaged RC exterior joints. (սահմանող)

Ուսումնասիրության հաջորդ քայլը ատենախոսության երկրորդ գլխում քաղաքաշինության ոլորտի ճարտարագիտական տեքստերի հիմնամասերի լեզվատճական առանձնահատկությունների վերհանումն է: Այստեղ ուշադրության կենտրոնում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են գոյականների քանակական առավելությունը բայական միավորների նկատմամբ, անցյալ ժամանակաձևերի գերակա գործածությունը, հապավումների առատությունը, հեջավորման և այլ խնդիրներ: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում պարբերությունները: Դրանք, թեև տրամաբանական, ոճական և գործաբանական առումով ճիշտ կազմակերպված մտքի համապատասխան լեզվական արտահայտությունն են (ինչպես սովորաբար բնորոշ է գիտական խոսքին), այնուամենայնիվ ճարտարագիտական տեքստերում զգալիորեն գերազանցում են գիտական ոճին բնորոշ առավելագույն 7-10 տողի ծավալային չափանիշը: Ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել, որ մեր կողմից հետազոտվող

նյութի շրջանակներում պարբերության ծավալը որոշակիորեն պայմանավորված է շարադրանքի թեմատիկ բովանդակությամբ: Որքան ավելի բարդ է հետազոտողի կողմից ներկայացվող գաղափարը (կամ տեխնիկական սարքը), այնքան ավելի անհրաժեշտություն է զգացվում զարգացնելու, մեկնաբանելու և պազաբանելու այն, որն էլ, բնականաբար, լայնացնում է պարբերության սահմանները:

Այսպես՝

*The retrofitted specimen RSM1 with only one CFRP sheet on the web exhibited a brittle failure. This specimen was tested under a similar loading regime as CSM0. Firstly, flexural cracks in the beam end became more obvious and then the top beam bars started to yield in tension at the column face and some bond deterioration was observed in the main beam bars around the beam end facing the column. At ultimate, concrete crushing occurred at the face of the column, which followed by the beam rotation **about** the fulcrum, and the rupture of CFRP on the tension side. Subsequently, major cracks were relocated from the cut-off of CFRP to the beam end at the column face. A loud crackling sound was heard at this stage indicating the initiation of concrete crushing and the subsequent rupture of CFRP. No shear cracks were **observed** in the beam end or within the joint region. Figure 9 shows specimen RSM1 at failure. Specimen RSM2 was **tested** under the same loading regime as RSM1. Firstly at the displacement ductility of 1, the flexural cracks at the cut-off point of the wrap became more obvious and then the top beam bars started to yield near the cut-off point of CFRP. These cracks became wider towards the failure point. Some shear deformations were occurred in the wrapped area. In general, this specimen exhibited a ductile failure. In this specimen, plastic hinges were relocated from the column face to the cut-off point of CFRP as shown in Figure 9.*

Հատվածում ընդգծված նախադասությունը (*The retrofitted specimen RSM1 with only one CFRP sheet on the web exhibited a brittle failure.*) պարբերության առանցքային նախադասությունն է, որը ներկայացնում է հեղինակի հիմնական միտումը՝ նկարագրել և իր ընթերցողին պատկերացում տալ քաղաքաշինության մեջ կիրառվող RSM1 կոչվող սարքի ինչ-որ մոդիֆիկացված տարբերակի մասին, որը ինչ-ինչ տեխնիկական թերությունների պատճառով չի կարող հուսալիորեն կիրառվել շինարարության պրոցեսում, քանի որ անկարող է ապահովել հուսալի շինարարական արդյունքներ: Որպեսզի սարքի թերությունները հասանելի դարձնի տվյալ ոլորտով հետաքրքրվող մասնագետների համար և հնարավորինս համոզիչ դարձնի իր խոսքը, հեղինակը ներկայացնում է իր տեխնիկական փորձարկման մանրամասները և նույնիսկ բերում ինչ-որ թվային տվյալներ: Այս ամենը անխուսափելիորեն ընդլայնում են շարադրանքը և համապատասխանաբար պարբերության սահմանները:

Հաջորդ փուլերում քննության են առնվում մեխանիկայի և էլեկտրոնիկայի բնագավառները ներկայացնող ճարտարագիտական տեքստեր, որտեղ լեզվաճակատային քննությանը բացահայտվում են բոլոր վերը նշված լեզվական երևույթները: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ ճարտարագիտության տարբեր բնագավառների տեքստերում կիրառվող անգլերենի գործառնական բնութագիրն ընդհանուր առմամբ նույնն է: Դրանց հիմնական տարբերությունը բառապաշարի տերմինաբանական միավորները ներկայացնող շերտն է և ընդհանուր գիտական բառապաշարի այն միավորները, որոնք տերմինացման միտում են դրսևորում: Էլեկտրոնիկայի բնագավառի ճարտարագիտական տեքստերը (մասնավորապես դրանց հիմնամասերը) առանձնանում են նաև բազմաթիվ աղյուսակների, թվային հաշվարկների ու գծապատկերների առատությամբ, որոնք տեխնիկական այս կամ այն երևույթի լեզվական մեկնաբանությունը լրացնող արտալեզվական միջոցներ են և օգնում են մեկնաբանություններն ընթերցողին առավել հասանելի դարձնելու:

Աշխատանքի երկրորդ գլուխը սահմանափակվում է ճարտարագիտական տեքստերի եզրափակիչ վեջնահատվածների քննությամբ, որը ատենախոսին բերում է այն համոզման, որ ցանկացած հետազոտական աշխատանքում, այդ թվում նաև ճարտարագիտության ոլորտի

հետազոտություններում չափազանց կարևոր է եզրակացությունների հատվածը, քանի որ այն միտված է ամփոփ, հստակ ու համոզիչ ձևով ներկայացնելու ուսումնասիրության նպատակի իրականացումը, ստացված արդյունքների հավաստիությունն ու օգտակարությունը: Ու թեև տարբեր տեքստերում եզրակացությունների հատվածը կարող է տարբեր ներմուծող նախադասություններով սկսվել, այդուհանդերձ դրանց բոլորին էլ բնորոշ է կաղապարացված արտահայտությունների կիրառություն (մասնավորապես այնպիսի միավորների գործածությամբ, ինչպիսիք են *conclusion, results, occur, result in, lead to, report, realize, supersede* և այլն), որոնք եզրահանգման հասկացական դաշտի շրջանակներում են:

Այսպես՝

*The test **results reported** herein have led to the following **conclusions** concerning the plastic hinge location.*

*The following **conclusions** can be made based on the **results** and discussion of the study conducted.*

*The following **conclusions** can be drawn based on the limited research **reported** in this paper.*

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր վերջնահատվածներն էլ հստակ են, հնարավորինս հակիրճ, կառուցված են խոսքի տնտեսման սկզբունքով և սահմանափակվում են տվյալ ուսումնասիրության շրջանակներով:

Ատենախոսության Եզրակացություն բաժնում ի մի են բերվում սույն հետազոտության արդյունքները: Ճարտարագիտական ՀՆԼ-ի գործառական բնութագիրը աչքի է ընկնում.

- հուզարտահայտչական երանգների լիակատար բացակայությամբ,
- դրանց հստակությունն ու ընթեռնելիությունը ապահովվում է բարդ ստորադասական և բարդ համադասական նախադասությունների կիրառությամբ և կապակցող միավորների առկայությամբ,
- գլխավորապես բացակայում են ձևաբանական հակադրությունները,

- շարադրանքը գլխավորապես անվանական բնույթ ունի (գերակայում են գոյականները),
- շարադրանքում բացակայում են հետագոտողի անձը ընդգծող միավորները,
- պարբերությունները աչքի են ընկնում կուռ տրամաբանական հաջորդականությամբ և նկատելի ծավալայնությամբ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. ESP/EAP as a Specific Register of Scientific English // Armenian Folia Anglistika. International Journal of English Studies. Yerevan, 2011, N 2(9), pp. 66-78.
2. EAP as a Specific Register of Scientific English // Language, Literature & Art in Cross-Cultural Contexts. Third International Conference. Programme and Abstracts, Yerevan, YSU, 2011, 4-8 October, p. 89.
3. The Introduction of Academic Articles on Civil Engineering and Its Linguostylistic Analysis // Armenian Folia Anglistika. International Journal of English Studies. Yerevan, 2012, N 1-2(10), pp. 35-42.
4. The Main Body of a Civil Engineering Text as an Object of Linguostylistic Analysis // Օտար լեզուները Հայաստանում: Եր., 2013, N 1, էջ 3-13.

Мину Махмуд Хамесиан

**Функциональный подход к изучению английской речи
в области прикладной науки
(в контексте иранской академической среды)**

Диссертация на соискание
ученой степени кандидата филологических наук
по специальности 10.02.07 – “Германские языки”

Резюме

Настоящая диссертационная работа посвящена исследованию специфики использования английского в области прикладной науки – а именно инженерной техники. При этом отправной точкой для исследования является идея о том, что данная разновидность языка, как и любая другая, обладает определенными функционально-значимыми характеристиками, позволяющими определить их место и роль в системе функциональных стилей современного английского языка. **Актуальность** исследования обусловлена прежде всего интенсивным развитием отношений между разными странами в сфере науки и техники, особенно на фоне современных процессов глобализации. Избранная нами тема **актуальна** также и потому, что в контексте научного общения в Иране, в частности в сфере инженерной техники, знания и компетентность в данной профессионально ориентированной разновидности английского оставляют желать лучшего. Это объясняется тем обстоятельством, что преобладающая часть специалистов этой области не имеют четкого представления о функционально-стилистических характеристиках данного языка для специальных целей.

Цель настоящего исследования заключается в выявлении и всестороннем изучении тех языковых и стилистических

особенностей данного подъязыка, которые и позволяют определить его место и роль в системе функциональных стилей английского языка.

В связи с формулированной в работе целью исследования в диссертации были поставлены и решены следующие задачи:

- изучить лексический состав текстов по инженерной технике, выявить структурно-семантические особенности составляющих их единиц, а также корреляцию денотативных и коннотативных компонентов в значении слова;
- исследовать особенности употребления грамматических категорий по инженерной технике;
- определить характер синтаксических связей в тексте (напр., наличие/отсутствие союзов), а также роль “синтаксических” фигур в организации данного специального текста;
- проанализировать рамки сверхфразового единства в текстах по инженерной технике.

Для решения поставленных в работе задач был применен метод лингвостилистического анализа, который включает исследование языкового материала на семантическом и метасемиотическом уровнях. Применение указанного метода дает возможность исследовать материал многосторонне – с точки зрения лексических, морфологических и синтаксических характеристик.

Фактический материал исследования представляет аутентичные тексты научных статей из иранских и международных периодических изданий (общее количество 1000стр.)

Новизна настоящего исследования обусловлена прежде всего самой постановкой задачи – выявить языковые и стилистические характерные черты подъязыка инженерной техники и определить его место в общей системе функциональных стилей современного английского языка. По существу впервые предпринимается

попытка всестороннего изучения данного языка для специальных целей (ESP) с акцентом на его функциональный характер.

Теоретическое значение исследования состоит в применении метода лингвостилистического анализа к изучению, которое позволяет понять функциональную сущность данной разновидности языка. Полученные результаты вносят определенный вклад в развитие теории функциональных стилей современного английского языка.

Практическую ценность исследования трудно переоценить в контексте современного глобализованного мира. Результаты проведенного исследования могут быть активно использованы в прикладной сфере инженерной техники вообще и в академической среде в спецкурсах и спецсеминарах для студентов-инженеров в частности. Они могут также быть полезными в области перевода и особенно в иранской академической среде.

Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы и словарей, приложений.

Minoos Mahmud Khamesian

**FUNCTIONAL APPROACH TO ENGLISH
FOR ENGINEERING**

(with special reference to Iranian academic context)

SUMMARY

It is common knowledge that since English has become the international language of research and scholarship, more and more non-native English speakers are communicating in written English. Hence the prominence of the English language learning/teaching which has now widened its traditional scope and definitely acquired a communicative orientation. However, when being concerned with communicative language teaching, we have to proceed from the assumption of pursuing the purpose of practicing different syntactic patterns, but chiefly aim at fulfilling a certain communicative function. The thing is that as far as the communicative function is concerned, the learner's attempts to produce language "in general" bring him to a deadlock.

In terms of scientific communication, whatever scientists do and observe, everything they come to know or to hypothesize, is mediated through the language. As believed, there is no real world that scientists know independently of the linguistic, graphic, and mathematical formulations by which they conceive it. Without the resources of language, the scientific enterprise would not progress for long. Technical writing is very essential in engineering, technology, communication, business, social science, nursing, law, accounting, education, architecture, management, industry and other professional fields. In order to understand what it means to use scientific English effectively - at the level of words, sentences, and paragraphs - it is of paramount importance to understand what scientific English is in the broadest sense of the word: what are its aims and linguistic qualities, what are the relationships between scientist-writers and their intended readers, what is the historical origin of the scientific attitude toward language?

The **goal** of the present dissertation is to further familiarize EAP teachers and learners (engineering students) with structural and linguistic peculiarities of engineering writing and to reveal its stylistic means and features, so that they can write confidently using the appropriate style and structure.

The **objectives** of the present dissertation are:

- to study the semantic structure of words in engineering writing and the correlation of the denotative and connotative meanings in it, as well as the interrelation of the stylistic connotations of the word and the context.
- to study the stylistic potentials of specific grammatical forms and categories, such as the number of the noun, or the peculiar use of tense forms of the verb, etc.
- to study the expressive order of words, types of syntactic links (asyndeton, polysyndeton), figures of speech (antithesis, chiasmus, etc.).
- to study the boundaries of supraphrasal unities in engineering texts.

In order to fulfill the mentioned tasks the **method** of linguostylistic analysis was applied to the investigation the language material. The method includes the analysis on the semantic and the metasemiotic levels. On the semantic level linguistic units were regarded as parts of the emic system of language. In other words, we embarked on understanding the general linguistic content, or nominative (direct) meanings of linguistic units. However, this was a preliminary linguistic investigation from which to pass on to the metasemiotic, or stylistic analysis proper.

Since the method of linguostylistic analysis is comparatively new, the present dissertation concentrating on engineering texts using the method could be of **paramount importance** to non-native speakers of English who have a difficulty in writing efficient technical texts.

To **justify** my work it should be mentioned that I have been teaching English for both General and Specific Academic Purposes to engineering students for over 10 years. I have also worked closely with individual research students who have been writing research articles. I have learned that the language skills the engineering students are taught are not sufficient to organize their papers. Also,

when conducting needs analysis, or planning discussions about the course content taught to engineers, it became clear that writing problems I had encountered in the context of English were recurring in the L1 writing context (Farsi), for example being clear about writing purpose, selecting and organizing ideas, stylistic appropriacy, grammar, and discourse organization.

As far as the **novelty** of this study is concerned, it should be mentioned, that, generally speaking, ESP is considered as belonging to methodology in Iran, few scholars have so far talked about the specific stylistic features of English for Engineering Students. Specific English at universities in Iran basically includes a process of translation of engineering texts into Farsi and sometimes vice versa. Moreover, it is common knowledge in Iran that after four years of bachelor degree, engineering students are not prepared to write even a short text without having it properly edited.

The **theoretical value** of the study first of all consists in the application of the linguostylistic method of analysis to engineering texts which avails the investigator of the possibility of bringing out the linguistic and stylistic peculiarities of engineering texts the understanding and evaluation of which helps to identify engineering English as a specific variety of ESP and find its place in the system of scientific registers. The theoretical importance of the present investigation cannot be overestimated from the point of view of the further development of the theory of functional styles.

The findings in this study will be of **practical** value to engineering students, engineering instructors, and of course to the system of teaching the English language at universities for the quality of education and learning largely depends on a perfect competence in the language taught. It is our firm belief that linguistics cannot be separated from teaching, for being a proficient language teacher necessitates good knowledge of linguistics as well. Thus, the results of this investigation can be a guideline to pursue academic writing strategies for foreign language prospective engineers who seek to write in English in ways that will allow their work to be accepted in English academic community, in a world in which academic discourse in English is dominating.